

ԻՒՂԱՆԵՐԿ ՆԿԱՐՆԵՐՈՒ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

1996 Մայիս 11-12 մարդաշատ էր ժառանգաւորաց Վարժարանի մեծ սրահը: Հայր Ընծանուէր Աքեղայ Բարախանեանի իւղաներկ աշխատանքները մեծ հետաքրքրութիւն էին առաջացրել գաղութիս արուեստասէր շրջանակում: Ցուցահանդէսը բացեց Ամենապատիւ Թորգոմ Պատրիարք Մանուկեանը, որ արուեստասէր հասարակութեանը ուղղուած իր խօսքին մէջ նշեց, թէ կարեւոր է Միարանութեանս եւ գաղութիս մէջ ունենալ արուեստագէտ մարդիկ: Իր այս երազանքը այս ցուցահանդէսով մասամբ կատարուած է համարում: Նա նշեց նաեւ, որ այս տեսակ միջոցառումներն են որ համախմբում են հայութիւնը, եւ դաստիարակում մարդկանց մէջ գեղեցիկը հասկանալու եւ գնահատելու կարողութիւնը:

Իր մտածումները եւ դատողութիւնները արեց նաեւ Տ. Ընծանուէր Աքեղան, որը մասնաւորապէս ասաց.

- Ճիշտն ասած ինձ համար այսօր շատ դժուար է խօսելը, քանի որ ցուցադրուող նկարները իմ աշխատանքներս են: Բայց կ'աշխատեմ որոշ դատողութիւններ անել արուեստի, մասնաւորապէս նկարչութեան եւ այսօրուայ ցուցահանդէսի մասին:

Ես այն կարծիքին եմ, որ անշնորհի մարդ չկայ: Մնուելիս մեր մէջ կայ եւ երաժիշտը, եւ նկարիչը, եւ ֆանդակագործը: Սակայն մեր կեանքի ընթացքում մենք մոռացում ենք դրանց՝ տարբեր աղիւթներով: Կամ՝ թիրախաւստութիւնը մեր ուժերի նկատմամբ, կամ՝ մեծահասակների կողմից անտարբեր վերաբերմունքը մեր ստեղծագործական առաջին փայլերին, կամ՝ լարուած ու ծանր կենցաղային գործերը, եւ կամ արուեստը աշխարհիկ ու մեղաւոր զբաղմունք համարելը մեզ դարձնում են չոր ու անհետաքրքիր անօթներ: Մենք նմանում ենք Աստուածաշնչեան այն ծառային, որին Յիսուս տուեց քանդակ, իսկ նա տարաւ ու քաղեց զայն հոգի մէջ: Աստուած մեզ տուել է շնորհներ, ու մենք անտեղեկ ենք դրանցից:

Երէկ ձեռքս գիրք մը անցաւ՝ «Մարմինը եւ Հոգին Ոյնբիմ Թշնամիներ» վերնագրով: Ես չգիտեմ, թէ այդ գրքի մէջ ինչ էր գրուած, բայց ես զարմացայ, թէ մենք ինչու ենք ամէն ինչի մէջ ոյնբիմ բշնամիներ ման գալիս: Մի՞թէ մեր այս ձեռքերով չեն ստեղծում արուեստի հրաշալիքները: Մի՞թէ մեր այս լեզուին չի փառաբանում Աստծուն, մեր այս մարմինը արդեօ՞ք գեղեցիկ չէ: Զե՞ որ այն Աստուծոյ ստեղծագործութիւնն է: Որտեղի՞ց

այդ արհամարհական վերաբերմունքը: Զի՞ կարող արդեօք լինել հոգու եւ մարմնի կատարեալ ներդաշնակութիւն, նիւթականի եւ հոգեւորի «հարմոնիա»:

Կարելի է: Արուեստի, նկարչութեան, գեղեցիկի միջոցով: Ուղղակի պէտք է տեսնել գեղեցիկը: Այս աշխարհի բոհոփոհի մէջ ընկած, դժոխքի ու արքայութեան գաղափարներով սարսափած, մարդը կորցրել է գեղեցիկը տեսնելու եւ գնահատելու ՄԵՍ ՇՆՈՐՀԺԸ: Այստեղ է ամէն բան, մեր մէջ, այս աշխարհի վրայ, մարդկային անկեղծ ու ջերմ յարաբերութիւնների մէջ: «Արքայութիւնը ի ներքս ի ձեռք է», դրախտը՝ ամէն բացուող ծաղկի թերթերին, դժոխքը՝ մեր չար մտադրութիւնների մէջ: Ամեն առաւօտ բացուող արեւը մեզ կ'ամ արքայութիւն է խոստանում, կ'ամ գեղեցիկ կրակ խորհրդանշում: Նայած թէ մենք ո՞րն ենք ուզում, նայած թէ մարդ ո՞րն է ընտրած հենց այստեղ, հենց այս աշխարհի վրայ ...

Ես ուզում եմ, որ այսօր, այս սրահի մէջ մենք վերագտնենք մեզ, կարողանանք տեսնել գեղեցիկը: Ես այսօր, իմ նկարների միջոցով ուզում եմ ասել. մեր ամենամեծ ողբերգութիւնները գալիս են նրանից, որ մենք շատ վաղուց է, ինչ ծաղկից հոտ չենք փաշել, չենք նայել աստղազարդ երկնքին, ու չենք հիացել նուազ հատիկների դասաւորութեամբ:

Եւ երբ մենք կ'ասենք. «Ես ժպտում եմ» երբ նայում եմ աստղերին, կամ՝ ես խաղաղում եմ՝ երբ աղբիւրից ջուր եմ խմում, կամ՝ ծաղկից հոտ փաշելը՝ ինձ համար աղօթք է, այն ժամանակ աշխարհը կը ժպտայ, ծառի ամէն մի տերեւ մեզ համար դրախտի ուղեգիր կը դառնայ եւ Աստուած կը հաշտուի մարդու հետ ..

Եւ ոչ մի գիտնական ու աստուածաբան երբեք չի հասկանայ, թէ որքա՞ն կարեւոր է այդ:

Ես ուզում եմ իմ որդիական խորին շնորհակալութիւնը յայտնել Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօրը, որի ֆաջալերմանի արգասիքն է այս ցուցահանդէսը: Պատրիարք Սրբազան Հօր հրամանով էր որ ես հետեւեցայ նկարչութեան մասնաւոր դասերուն եւ ահա իմ վեց ամսուայ աշխատանքը այսօր կը ներակայացնեմ ձեզ: Շնորհակալութիւն Սրբազան Հայր, իմ երախտիքի խօսքերի նիւթական արտայայտութիւնը բոլոր լինի այս պատկերաշարը:

Շնորհակալութիւն Երուսաղէմի մեր ժողովրդին, որը, իմ վստահ համոզմամբ գիտէ գնահատել գեղեցիկը:

ԸՆԾԱՆՈՒԷՐ ԱՔԷ. ԲԱԲԱՆԱՆԵԱՆ